

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

### 4.20 Շահագրգիռ կողմերի ներգրավում

#### 4.20.2

4.20.1 Տրամադրված տեղեկություններ ..... 4.20.3

4.20.2 Շահագրգիռ կողմերի հարցերը..... 4.20.6

4.20.3 ԲՄԱԳ-ի հրապարակում և շահագրգիռ կողմերի ներգրավման պլանավորում... 4.20.7

#### 4.20 Շահագրգիռ կողմերի ներգրավում

Ամուլսարի ծրագրի՝ շահագրգիռ կողմերի ներգրավումը սկսվել է 2006 թվականին և ծրագրի զարգացմանը զուգահեռ դարձել է ավելի կազմակերպված:

Ամեն ամիս բաժանվում են համայնքային լրատուներ: Ծրագրի շրջանակներում որդեգրված շահագրգիռ կողմերի ներգրավման մոտեցումների վերաբերյալ բոլոր մանրամասները նկարագրված են Շահագրգիռ կողմերի ներգրավման պլանում (ՇԿՆՊ)՝ Հավելված 8.6-ում: Այս պլանը «կենդանի» փաստաթուղթ է, որը պարբերաբար թարմացվում է (առնվազն տարին մեկ անգամ, և վերջին անգամ այն թարմացվել է 2016թ. մայիսին):

Առաջին ՇԿՆՊ-ն մշակվել է 2011թ. և այնուհետև հրապարակվել է 2011թ. հոկտեմբերին: ՇԿՆՊ-ն վերանայվել և անմիջապես հրապարակվել է 2012թ. սեպտեմբերին, 2013թ. մայիսին, 2014թ. հունիսին և 2015թ. հունվարին: Այս փաստաթղթի վերջին տարբերակը թվագրված է 2016թ. հունվարով և հասանելի է անգլերեն և հայերեն լեզուներով, հրատարակված է Գնդեվազի Ամուլսարի տեղեկատվական կենտրոնում (ԱՏԿ), Գեոթիմի երևանյան գրասենյակում և Լիդիանի ու Գեոթիմի կայքերում:

Որոնողահետախուզական, նախատեխնիկատնտեսական և բուն տեխնիկատնտեսական ուսումնասիրության ընթացքում ՇԿՆ-ի հիմնական նպատակը ազգային, տարածաշրջանային և տեղական մակարդակներում Գեոթիմ ընկերության և շահագրգիռ կողմերի միջև երկկողմ կապի ստեղծումն էր, որպեսզի ԲՄԱԳ-ում, ՇՄԱԳ-ում և Ծրագրի նախագծում, երբ դրանք մշակվում են տեխնիկատնտեսական ուսումնասիրությունների միջոցով, որոնցից եզրափակիչը 2015թ. նոյեմբերով թվագրված “Տեխնիկական հաշվետվություն. Ամուլսարի Ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացում”, որտեղ ներկայացված է հանքի վերջնական պլանը և հատակագիծը: ՇԿՆՊ-ը այժմ շարունակվելու է, որպեսզի աջակցի հանքավայրում ձեռնարկվող շինարարական աշխատանքներին, որոնք մեկնարկվելու են 2016թ. երկրորդ-երրորդ եռամսյակում:

ՇԿՆՊ-ում նկարագրվում է, թե ինչպես են շահագրգիռ կողմերը տեղեկացվել և ինչպես են տեղեկացվելու ու խորհրդակցվելու Ծրագրի զարգացման աշխատանքների, ազդեցությունների գնահատման գործընթացի և Ծրագրի զարգացման և առաջիկա շինարարության տարբեր փուլերի վերաբերյալ: Շինարարության և շահագործման փուլերի ընթացքում շահագրգիռ կողմերի ներգրավման գործողությունները կենտրոնանալու են նրանց իրազեկելու և Ծրագրի գործողությունների վերաբերյալ

հետադարձ կապ ստանալու վրա, նրանց հետ ազդեցությունների, դրանց մեղմացման միջոցառումների, մոնիտորինգի և բնապահպանական կառավարման վերաբերյալ տեղեկատվության տարածման և քննարկման նպատակով կապ պահպանելու վրա: Շահագրգիռ կողմերի մտահոգությունների վերաբերյալ հետադարձ կապը ստացվում է տարբեր մեխանիզմների միջոցով, այդ թվում՝ Գնդեվազի ԱՏԿ-ի, համայնքային բողոքարկման մեխանիզմի և համայնքների հետ պաշտոնական և ոչ պաշտոնական խորհրդատվական միջոցառումների և հանդիպումների միջոցով ընթացիկ կապի պահպանմամբ:

Բարձրաձայնված բոլոր մտահոգությունները հերթականությամբ գրանցվում են և դրանց հետևում են Գեոթիմի բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգում (ԲՄԿՀ) օգտագործելով շահագրգիռ կողմերի ներգրավման տվյալների բազայի և բողոքարկման մեխանիզմը (տես՝ ՇԿՆՊ-ի, Գլուխ 10), որը կառավարվում է սոցիալական զարգացման թիմի կողմից: Բոլոր հարցերը, պահանջները և բողոքները քննարկվում են Ընկերության ղեկավարության և/կամ համապատասխան թիմի/գրասենյակի կողմից և դրանց անդրադառնում են հետագա հանդիպումների և լրացուցիչ խորհրդատվական միջոցառումների ընթացքում:

#### **4.20.1 Տրամադրված տեղեկություններ**

Գեոթիմը փորձել է նախքան շահագրգիռ կողմերին ներգրավելը կանոնավորապես նրանց տեղեկատվություն տրամադել: Մինչև 2015թ. դեկտեմբերն իրականացրած հանդիպումների ամբողջական ցանկը ներկայացված է ՇԿՆՊ-ում (տես՝ ՇԿՆՊ-ի Գլուխ 7):

Հանքարդյունահանման թույլտվություն ձեռք բերելու նպատակով 2014թ. հուլիսին հայերեն լեզվով մշակված ՇՄԱԳ-ը հրապարակվել է 2014թ. օգոստոսին: 2016թ. պատրաստված և հրապարակված ՇՄԱԳ փաստաթուղթը կարելի է գտնել Գեոթիմի կայքում (<http://www.geoteam.am/amulsar-project/environmental-impact-assessment.html>): ՇՄԱԳ-ի ուսումնասիրության եզրակացությունը ևս տեղադրված է Բնապահպանության նախարարության կայքում:

ԲՄԱԳ-ի տարբերակ 9f-ը Գեոթիմի կայքում հրապարակվել է 2015թ. մայիսի 27-ին, որտեղ հղում է եղել նաև Լիդիանի կայքից: Ներկայացված փաստաթղթերը հետևյալն էին՝

- Անգլերենով ամբողջական ԲՄԱԳ-ը, որն իր մեջ ներառում է “Ոչ տեխնիկական ամփոփագիրը”(ՈՏԱ), հիմնական տեքստը, առանձին կառավարման ծրագրերը՝

բաղկացած “Բնապահպանական և սոցիալական կառավարման պլանից /ծրագրից”(ԲՄԿՊ/Շ), տեխնիկական հավելվածները, և

- Հայերենով “Ոչ տեխնիկական ամփոփագիրը”(ՈՏԱ), հիմնական տեքստը, Հողի ձեռքբերման և կենսակերպի վերականգնման պլան, Հասարակական պարտավորությունների գրանցամատյան (ՀՊԳ):

ԲՄԱԳ-ի փաստաթղթերի ամբողջական փաթեթը անգլերեն լեզվով տպագրված կարելի է գտնել Գեոթիմի երևանյան գրասենյակում: Գտնվազում՝ Ամուլսարի տեղեկատվական կենտրոնում կարելի է տեսնել փաստաթղթերի ամբողջ փաթեթը բացառությամբ տեխնիկական հավելվածների (ԱՏԿ): Ինչպես երևանյան գրասենյակում, այնպես էլ ԱՏԿ-ում տրամադրվել են նաև ՈՏԱ-ի, հիմնական տեքստի, ՇԿՆՊ-ի և ՀԶԿՎՊ-ի տպագիր տարբերակները հայերենով:

“Տեխնիկական հաշվետվություն. Ամուլսարի Ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացում”-ը հրապարակվել է 2015թ. նոյեմբեր ամսին Լիդիանի կայքում, ինչպես նաև Կանադական անվտանգության ծառայության վարչական մարմինների Էլեկտրոնային փաստաթղթերի վերլուծության և որոնման համակարգի (SEDAR) կայքում (<http://www.sedar.com>), ինչպես պահանջվում է Տորոնտոյի արժեթղթերի բորսայում ցուցակված ընկերություններից:

Ներկայիս ԲՄԱԳ-ը՝ տարբերակ 10 հրապարակվելու է Լիդիանի և Գեոթիմի կայքերում (2016թ. մայիս) և Հայաստանում տեղական հրապարակման միջոցառումների ընթացքում: Այն հրապարակվելու է ՄՖԿ-ի և ՎԶԵԲ-ի կողմից իրենց կայքերում՝ համաձայն ներքին ընթացակարգերի պահանջների:

ՇՄԱԳ և ԲՄԱԳ հաշվետվությունների մշակման կրկնվող գործընթացում իրազեկման հիմնական միջոցառումները ներառում են հետևյալ պաշտոնական հանդիպումները.

- Ամուլսարի ՇՄԱԳ մանրամասն հաշվետվության վերաբերյալ հանրային լսումներ (Տիգրանեսի բացահանք), նոյեմբեր, 2009թ.,
- Ամուլսարի ոսկու բացահանքավայրի նախնական ուսումնասիրությունների հաշվետվություն, Հայաստան, փետրվար, 2011թ.,
- «Խաչաքար»-ի տեղամասի որոնողահետախուզական թույլտվության հայեցակարգային ՇՄԱԳ ուսումնասիրության վերաբերյալ հանրային լսումներ, ապրիլ, 2011թ.,

- Նախնական ուսումնասիրության արդյունքների և ԲՄԱԳ-ի հայեցակարգի, էլակետային պայմանների և հանքավայրի պլանի ներկայացում յուրաքանչյուր համայնքում (ընդհանուր առմամբ 4), մայիս, 2011թ.,
- Գորայքում և Ջերմուկում ԲՄԱԳ-ի ներկայացում, էլակետային ուսումնասիրության արդյունքների ամփոփում, տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության հետ կապված տեղեկատվության, օրինակ՝ հանքավայրի նախագծի, շահագործման առանձնահատկությունների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, նոյեմբեր, 2011 թ.,
- ՇՄԱԳ-ի շրջանակներում հանքաքարի մշակման հայեցակարգային նախագծի (ջարդում/մանրացում, տեղափոխում, ԿՏՀ և ԱԴՎ) վերաբերյալ հանրային լսումներ, նոյեմբեր, 2011 թ.,
- ՇՄԱԳ-ի շրջանակներում Արտավազդես և Տիգրանես բացահանքերի և դատարկ ապարների լցակույտերի վերաբերյալ չորս հանրային լսումներ, մարտ-հուլիս, 2012թ.,
- հայեցակարգային ՇՄԱԳ-ի շրջանակներում կույտային տարրավազման հրապարակի (ԿՏՀ) վերաբերյալ հանրային լսումներ, հուլիս, 2013թ.,
- ԲՄԱԳ-ի ներկայացում, էլակետային ուսումնասիրության արդյունքների ամփոփում, տեխնիկատնտեսական հիմնավորման ուսումնասիրության հետ կապված տեղեկատվության, օրինակ՝ հանքավայրի նախագծի, շահագործման առանձնահատկությունների և ժամկետների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում, հուլիս, 2013 թ., Ջերմուկ,
- ԿՏՀ-ի հավանական տեղակայման վայրերը քննարկելու նպատակով կազմակերպվել են աշխատանքային խմբի մի շարք հանդիպումներ, հուլիս-սեպտեմբեր, 2013թ., Երևան:
- Հողի օտարման գործընթացը պարզաբանելու նպատակով 2014 և 2015թթ. Գնդեվազում տեղի բնակիչների հետ տեղեկատվական հանդիպումներ և թիրախային խմբերի, հովիների հարցումներ և կենսաբազմազանության ուսումնասիրություններ:
- Հանքարդյունահանման թույլտվության ձեռք բերման նպատակով 2014թ. հուլիսին ՀՀ Կառավարությանը ներկայացված դիմումի շրջանակներում ՇՄԱԳ-ի հաստատման գործընթացի հետ կապված կազմակերպվել է երկու հանրային լսում. մեկը՝ Գնդեվազում, օգոստոսի 25-ին, և մյուսը՝ Գորայքում, սեպտեմբերի 27-ին: Գեոթիմը բնապահպանական նախարարությունից վերջնական դրական եզրակացություն ստացել է 2014թ. հոկտեմբերի 17-ին:

- ԲՄԱԳ-ի 9f տարբերակի հրապարակմանը նախորդող հանդիպում Երևանում, 2014թ. հոկտեմբերի 30-ին, որին մասնակցում էին շատ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչներ:
- ԲՄԱԳ-ի 9f տարբերակի հրապարակմանը նվիրված հանդիպումներ Ջերմուկում, Գնդեվազում, Սարավանում, Գորայքում և Երևանում 2015թ. հունիս և հուլիս ամիսներին:
- Միասնական ՇՄԱԳ-ի հանրային լսումներ և ԲՄԱԳ-ի տեղեկատվական հանդիպումներ Գնդեվազում 2015թ. դեկտեմբերի 17-ին՝ բոլոր տեղական շահագրգիռ կողմերին տեղեկացնելու համար ՇՄԱԳ-ի և ԲՄԱԳ-ի նախապատրաստման վերսկսման մասին:

ԲՄԱԳ-ի տարբերակ 10-ի հրապարակումը ծրագրված է 2016թ. մայիսի վերջին և հունիսի սկզբին:

Գեոթիմի՝ բնապահպանական և սոցիալական կառավարման համակարգերի, տեխնիկատնտեսական հիմնավորման , ինչպես նաև ծրագրի նախագծի և ծախսերի օպտիմալացման վերաբերյալ և ԲՄԱԳ-ի պատրաստման հետ կապված ամենաթարմ փաստաթղթերը տեղադրված են ընկերության կայքում.

<http://www.geoteam.am/en/reports/technical.html>.

Բոլոր շահագրգիռ կողմերը պետք է հաշվի առնեն, որ հնարավոր ազդեցությունները և մեղմացնող միջոցառումները ժամանակի ընթացքում փոփոխվել են Ծրագրի նախագծի և ազդեցությունների գնահատման մշակմանն ու զարգացմանը զուգընթաց և շահագրգիռ կողմերից ստացվող հետադարձ կապի արդյունքում:

#### **4.20.2 Շահագրգիռ կողմերի հարցերը**

Աղյուսակ 4.20.1 և 4.20.2-ում համառոտ ներկայացված են շահագրգիռ կողմերի բարձրացրած հարցերը 2015թ. կեսերին տեղի ունեցած ԲՄԱԳ-ի 9f տարբերակի հրապարակմանը նվիրված վերջին խորհրդատվական իրադարձությունների ընթացքում կանոնավոր ներգրավման գործողությունների շրջանակներում: Նշված են նաև պատասխանները: Ներկայացված հարցերը, խնդիրներն ու մտահոգությունները հավաքվել են տարբեր խորհրդատվական միջոցառումներից, շահագրգիռ կողմերից ստացված նամակներից և Ծրագրի վերաբերյալ հասարակական կարծիքի կանոնավոր մոնիտորինգից:

#### **4.20.3 ԲՄԱԳ-ի հրապարակում և շահագրգիռ կողմերի ներգրավման պլանավորում**

2016թ. առաջին և երկրորդ եռամսյակների ընթացքում ՀԿ-ների, ՔԿՀ-ների և կառավարության համապատասխան մարմինների հետ կկազմակերպվեն հանրային խորհրդակցություններ 4 տեղական համայնքներում և Երևանում.

- Առաջին տեղեկատվական հանդիպումը Գնդեվազում, Սարավանում, Գորայքում ու Ջերմուկում ԲՄԱԳ-ի հրապարակման և հասանելիության վերաբերյալ,
- ԲՄԱԳ-ի՝ հանքի հետփական փուլին վերաբերող կլոր սեղան ՀԿ-ների հետ,
- ԲՄԱԳ-ի վերաբերյալ տեղեկատվական հանդիպում Երևանում միջազգային ֆինանսական հաստատությունների, դեսպանատների, միջազգային կազմակերպությունների և բիզնես գործընկերների տեղի ներկայացուցիչների հետ,
- Ծրագրի տարածքում և Երևանում ֆոկլուս խմբերի քննարկումներ կոնկրետ հարցերի շուրջ՝ ըստ անհրաժեշտության,
- ԲՄԱԳ-ի հրապարակմանը հաջորդող խորհրդակցական հանդիպում Գնդեվազում, Սարավանում, Գորայքում և Ջերմուկում,
- ԲՄԱԳ-ի հրապարակման և նրա շուրջ տեղեկատվական լրացուցիչ հանդիպումներ շահագրգիռ կողմերի պահանջի դեպքում: